««ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ» ԽՈՐԱԳՐՈՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2019 թվականի սեպտեմբերի 27-ին տեղի ունեցավ ««ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը՝ հանրային վստահության բարձրացման լույսի ներքո» խորագրով Քաղաքացիական հասարակություն-Կառավարություն» համաժողովը (այսուհետ՝ Համաժողով)։ Համաժողովը կազմակերպվել էր «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի (այսուհետ՝ ԻՀԱ) կողմից՝ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի, Հանրային խորհրդի պետահիրավական հարցերի հանձնաժողովի և ՀՀ արդարադատության նախարարության հետ համագործակցությամբ՝ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում:

Համաժողովի նպատակն էր.

- մասնագիտական հանրության հետ քննարկել ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրերի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) շահագրգիռ բոլոր կողմերի ներգրավմամբ, այդ թվում՝ դատական համակարգի, պետական այլ մարմինների, միջազգային կազմակերպությունների, ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ.

- հավաքագրել Կառավարության, այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, մասնավոր ոլորտի ներկայացուցիչների, իրավաբանական հանրույթի տեսակետները և առաջարկները Նախագծի վերաբերյալ:

Համաժողովին ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ-ում Եվրոպական միության արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. **Անդրեա Վիկտորինը**, ՀՀ արդարադատության նախարար **Ռուստամ Բադասյանը**, ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ **Ռուբեն Վարդազարյանը**: Բացման խոսքով հանդես եկան ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ **Դավիթ Մելքոնյանը**, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ **Արսեն Այվազյանը**, ՀՀ

փաստաբանների պալատի նախագահ **Արա Զոհրաբյանը**, վարում էր՝ ԻՀԱ նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող, Հանրային խորհրդի պետահիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ **Կարեն Զաղոյանը**:

Համաժողովը բաղկացած էր հետևյալ **չորս թեմատիկ քննարկումներից**:

1. **«Անցումային արդարադատություն. անցումային արդարադատության գործիքակազմը՝ որպես ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության մաս»** վերտառությամբ առաջին մասում քննարկվեց Նախագծով սահմանված անցումային արդարադատության գործիքակազմերից՝ փաստահավաք հանձնաժողովի ստեղծման, իրավունքների վերականգնման, պատասխանատվության անխուսափելիության հետ կապված նախագծային դրույթները: Առաջին թեմատիկ քննարկման **բանախոսներն էին** ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ **Աննա Վարդապետյանը**, «Անցումային արդարադատության հարցերով Հարվարդի համալսարանի Մարդու իրավունքների քաղաքականության կենտրոնի» նախկին գիտաշխատող **Արտյոմ Գեղամյանը**, ԻՀԱ և ՀՀ հանրային խորհրդի պետահիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ **Կարեն Զաղոյանը**, վարողն էր «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի իրավաբան-փորձագետ **Լուսինե Նալբանդյանը**:

2. «Դատական համակարգի վստահելիության բարձրացում հանրության շրջանում» վերտառությամբ երկրորդ թեմատիկ հատվածում քննարկվեց դատական համակարգի հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավման, դատական անկախության և անաչառության ապահովման, կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգի ստեղծման և արդյունավետության բարձրացման, ինչպես նաև փաստաբանական համակարգի արդյունավետության բարձրացման հետ կապված նախագծային դրույթները: Քննարկման բանախոսներն էին ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ **Ռաֆիկ Գրիգորյանը**, ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր **Ստեփան Միքայելյանը,** «Իրավունքի Եվրոպա Միավորում» ՀԿ-ի ավագ իրավախորհրդատու, փաստաբան **Տիգրան Եգորյանը**, քննարկումը վարում էր ՀՀ ազգային ժողովի պատգամավոր **Արման Բաբաջանյանը**:

3. Հաջորդ թեմատիկ քննարկումը նվիրված էր՝ **«Իրավապահ համակարգի արդյունավետության բարձրացում»** հատվածին, որի շրջանակներում քննարկվեց դատախազության համակարգի և քննչական մարմինների բարեփոխմանն առնչվող հիմնահարցեր: Այս քննարկման բանախոսներն էին ՀՀ դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության ավագ դատախազ **Գրիգոր Ամիրյանը**, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ **Արսեն Այվազյանը**, Հայաստանի

հելսինկյան կոմիտեի նախագահ **Ավետիք Իշխանյանը**, իսկ քննարկումը վարում էր ՀՀ հանրային խորհրդի անդամ, փաստաբան **Մարատ Ատովմյանը**:

4. Վերջին՝ **սահմանադրական և ընտրական բարեփոխումների հարցերին** առնչվող թեմատիկ քննարկումը անցկացրեցին Ծրագրի ՔՀԿ-Կառավարություն երկխոսության համակարգող, փաստաբան **Սյուզաննա Սողոմոնյանը** և Ծրագրի արդարադատության և հարակից ոլորտների համակարգող, իրավաբան **Արտյոմ Մեսրոպյանը**[1]:

Համաժողովի քննարկումների արդյունքում Նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկություններն ու դիրքորոշումները հավաքագրվել են ըստ հետևյալ ուղղությունների.

1. **Անցումային արդարադատություն. անցումային արդարադատության գործիքակազմը՝ որպես ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության մաս**

   1.1 Նախագծում ներառել **ԱԱ թեմայով իրականացված հանրային միջոցառումների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ**, մասնավորապես՝ 2018թ. նոյեմբերի 28-ի «Անցումային արդարադատության մեխանիզմների ներդրման հնարավորությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո» թեմայով քաղաքացիական հասարակություն-կառավարություն համաժողովի[2], 2019թ. փետրվարին հրապարակված «Անցումային արդարադատության մեխանիզմների կիրառելիության հնարավորությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո» զեկույցի[3], 2019թ. մայիսի 24-ի՝ անցումային արդարադատության վերաբերյալ խորհրդարանական լսումների, «Դատական վեթինգը՝ անցումային արդարադատության մեխանիզմ» վերնագրով վերլուծության[4], ինչպես նաև այլ հանրային քննարկումների բնույթ կրող միջոցառումների վերաբերյալ համապատասխան հղումները:

   1.2 **ԱԱ գործիքակազմի մաս կազմող քրեական արդարադատությունը չդիտարկել Նախագծով սահմանված «ճշմարտության որոնում» մեխանիզմից ածանցյալ**, այլ՝ այն ներառել Նախագծում՝ որպես ԱԱ առանձին գործիքակազմ: Մասնավորապես՝ Նախագծով **սահմանել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտմանն ուղղված**

---

[1] Տե՛ս միջոցառման լուսաբանումը հետևյալ հղմամբ՝ https://armla.am/44945.html

[2] Տե՛ս միջոցառման լուսաբանումը հետևյալ հղմամբ՝ https://armla.am/39677.html

[3] Տե՛ս «Անցումային արդարադատության մեխանիզմների կիրառելիության հնարավորությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո» զեկույցը հետևյալ հղմամբ՝ https://armla.am/41375.html

[4] Տե՛ս «Դատական վեթինգը՝ անցումային արդարադատության մեխանիզմ» վերնագրով վերլուծությունը հետևյալ հղմամբ՝ https://armla.am/44540.html

գործողություններ՝ հիմք ընդունելով ներկա սահմանադրական, դատաիրավական համակարգերի ու իրավապահ մարմինների շրջանակներում առկա օրենսդրական կարգավորումները՝ ապահովելով նաև համապատասխան սիներգիաներ ՀՀ 2019-2022թթ. հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների միջև:

1.3 **Սահմանել համակարգային բարեփոխումների իրականացման կոնկրետ դրույթներ**, քանի որ դրանք ինստիտուցիոնալ, երկարաժամկետ (ապագային ուղղված) կարգավորումներ են և պետք է հանդիսանան ԱԱ-ի իրականացման **վերջնանպատակ**:

1.4 Փոխել **Փաստահավաք հանձնաժողովի** (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) անվանումը, քանի որ այն ամբողջությամբ չի արտահայտում ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովի դերը և գործառույթները: Փաստահավաք գործողությունները ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովների գործառույթների մի մասն են կազմում: Ըստ միջազգային փորձի՝ այս հանձնաժողովի գործառույթներից է՝ **ճշմարտության որոնումը, հաշտեցման (սոցիալական համերաշխության) հաստատումը, որոնողական աշխատանքները և փաստերի հավաքագրումը (նաև՝ համակարգումը), ապացուցողական զանգվածի ձևավորումը և դրանք իրավապահ մարմիններին տրամադրումը, փոխհատուցման եղանակների ընտրության վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը**:

1.5 Հիմնավորել **«…Հանձնաժողովը կազմված է լինելու առավելագույնը 20 անդամից, գործողության ժամկետը երկու տարի է՝ հնարավորություն նախատեսելով անհրաժեշտության դեպքում ժամկետը երկարաձգել ևս մեկ տարով»** իրավադրույթը[5]: Անհրաժեշտ է Նախագծով հիմնավորել, թե ինչո՞ւ է հատկապես ընտրվել 20 հոգիանոց անդամների կազմ, ինչո՞ւ է նրանց գործունեության համար սահմանվել 2 տարի, այն դեպքում, երբ ըստ միջազգային փորձի՝ նմանատիպ հանձնաժողովների գործունեության համար հարկավոր է միջինը՝ 3-5 տարի:

1.6 Ռազմավարական տեսանկյունից միջոցառումները իրականացնել տրամաբանական հերթականությամբ. նախ՝ **հստակեցնել Հանձնաժողովի կողմից փաստահավաք գործունեության շրջանակները և ոլորտները**, **սահմանել անհրաժեշտ մասնագիտական**

[5] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը, էջ 16, https://www.e-draft.am/projects/1900

խմբերի[6] առկայությունը Հանձնաժողովի կազմում և ըստ այդմ նախատեսել անդամների թիվը:

1.7 Որպես առանձին գործողություն՝ **հանրային իրազեկման աշխատանքների իրականացումը,** որի շնորհիվ հասարակությունը պատկերացում կկազմի, թե ի՞նչ է իրենից ներկայացնում փաստահավաք գործառույթ ունեցող հանձնաժողովը և ովքե՞ր կարող են դիմել հանձնաժողովին՝ խախտված իրավունքները վերականգնելու համար:

1.8 **Բացառել երկակի մոտեցմամբ և ոչ հստակ իրավական ձևակերպումները:** Մասնավորապես՝ **«Խախտումների մասին տեղեկությունների հավաքման արդյունքում հնարավոր կլինի դիտարկել տուժողների իրավունքների վերականգնման հարցը այնքանով, որքանով դա հնարավոր է»**[7] դրույթի առնչությամբ անհրաժեշտ է նախ **սահմանել Հանձնաժողովի** կողմից փաստահավաք **գործունեության շրջանակները և ոլորտները**, **ըստ այդմ հստակեցնել փոխհատուցման եղանակները**՝ որպես պարտադիր կատարման ենթակա գործողություններ (միջոցառումներ), քանի որ ԱԱ վերջնական նպատակներից է նաև՝ տուժողների իրավունքների վերականգնումը:

1.9 Հիմք ընդունելով վերոնշյալը՝ **հստակեցնել Ռազմավարության կառուցվածքը**, լրացնել Նախագիծը՝ նախատեսելով ԱԱ գործիքակազմի մաս կազմող քրեական արդարադատության, փոխհատուցումների և համակարգային բարեփոխումների մասով միջոցառումներ (գործողություններ) ևս:

1.10 ԱԱ վերաբերյալ հանրային իրազեկման բնույթի միջոցառումներ, փաստաթղթեր կազմակերպելիս ԱԱ տերմինաբանության հետ կապված **առաջնորդվել պաշտոնական հայերեն թարգմանություններով**՝ զերծ մնալով հասարակության շրջանում օտարալեզու բառերի օգտագործումից և ոչ մատչելի մեկնաբանումներից, որոնք կարող են շփոթմունք առաջացնել հասարակության ոչ մասնագիտական հատվածի մոտ:

1.11 Իրականացնել ԱԱ գործիքակազմի ներդրումը գործող սահմանադրական և իրավական կարգավորումների ու միջազգային պարտավորությունների շրջանակներում՝ **բացառելով ոչ իրավական գործընթացների կազմակերպումը, ինչպես նաև՝ բացառել ԱԱ որևէ գործիքի իրականացումը գործող դատական և իրավապահ**

---

[6] Տե՛ս «Անցումային արդարադատության մեխանիզմների կիրառելիության հնարավորությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո» զեկույցը, էջ 145, https://armla.am/41375.html

[7] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը, էջ 17, https://www.e-draft.am/projects/1900

համակարգերի կողմից։ (Ներկայումս դատական և իրավապահ համակարգերի նկատմամբ ցածր է հանրային վստահության մակարդակը)։

2. **Դատական համակարգի վստահելիության բարձրացում հանրության շրջանում**

2.1 Ուժեղացնել իրավունքների պաշտպանության արտադատական մեխանիզմները, **կատարելագործել վարչական բողոքարկման ինստիտուտը վարչական դատավարությունում**, **իսկ քաղաքացիական դատավարությունում՝ վեճերի այլընտրանքային լուծումների ինստիտուտը**։ Սա կնպաստի դատարանների գերծանրաբեռնվածության մեղմացմանը և ողջամիտ ժամկետներում գործերի լուծմանը։

2.2 Իրավունքների պաշտպանության արտադատական մեխանիզմների ուժեղացման նպատակով փոփոխություն կատարել «ՀԿ-ների մասին» և հարակից այլ օրենքներում՝ իրավասություն ընձեռելով ՀԿ-ներին արտադատական կարգով պաշտպանել իրենց անդամների և շահառուների շահերը վարչական վարույթի շրջանակներում։ Այս փոփոխությունների **շարքում պետք է լինեն նաև այլ ընթացակարգային լուծումներ,** օրինակ՝ վերացնել հասարակության կազմակերպություններին տրվելիք լիազորագրի հաստատումը նոտարի կողմից։

2.3 Նախատեսել օրենսդրական կարգավորումներ՝ ուղղված վարչական վարույթի շրջանակներում փոխհատուցման մեխանիզմի մասով առկա խնդրի լուծմանը, մասնավորապես՝ առկա օրենսդրության պարագայում ծախսերի փոխհատուցում չի նախատեսվում վարչական վարույթի շրջանակներում պաշտպանվող կողմի համար, մինչդեռ վարչական մարմնին փոխհատուցում տրամադրելու պահանջը պարտադիր է։

2.4 Կատարելագործել դատական ակտի ձևը, որը կներառի և կապահովի դատավորի կողմից դատական ակտ կայացնելու համար անհրաժեշտ բոլոր հետևյալ բաղադրիչները՝ **փաստական հանգամանքների ճիշտ բացահայտում**, **ապացույցների բազմակողմանի, օբյեկտիվ, լրիվ գնահատում**, **իրավանորմի ընտրություն**, **մեկնաբանում և կիրառում։** Սա տեխնիկական առումով կնվազեցնի կոռուպցիոն ռիսկերը։

2.5 Արդարադատության իրականացման շրջանակներում վերանայել դատական սխալի դեպքում դատավորի նկատմամբ **կարգապահական պատասխանատվության դեպքերը, դասակարգել ու բնորոշել դիտավորությամբ (չարամտորեն), կոպիտ ձևով (ակնհայտ) և էական դատական սխալի** կատարումը։ Կարգապահական պատասխանատվություն նախատեսել բացառիկ դեպքերում՝ դատական սխալի չարամիտ դիտավորության

առկայության դեպքում: Եվ այս համատեքստում, բացառել այնպիսի կարգավորումները, **համաձայն որոնց դատավորները յուրաքանչյուր դրսևորած անփութության դեպքում կարող են ենթարկվել կարգապահական պատասխանատվության:**

2.6 Դատավորի պաշտոնից զրկելու տեսքով կարգապահական պատասխանատվության սահմանման շրջանակներում հիմք ընդունել ոչ թե դատավորի իրականացրած **նյութահիրավական կամ դատահիրավական մեկ սխալը, այլ՝ դատավորի ոչ իրավաչափ արարքի պարբերականությունը, քանի որ դա է ձևավորում դատավորի վարքագիծ**: Այս դեպքում գնահատվում է դատավորի աշխատանքի որակը և արհեստավարժությունը, և **հիմք է ընդունվում դատավորի վարքագծային զարգացումը կարգապահական պատասխանատվության եղանակներ կիրառելիս**:

2.7 Վերանայել Նախագծով սահմանված մոտեցումները՝ քննարկելով **«միայն վարքագծային կանոնների խախտման հիմքով կարգապահական պատասխանատվության կիրառումը»** սահմանելու հարցը:

2.8 Սահմանադրական դատարանն (այսուհետ՝ ՍԴ) իր որոշումներով սահմանել է դատավորների հավակնորդներին ներկայացվող խիստ պահանջներ: Հիմք ընդունելով այդ որոշումները՝ **խստացնել դատավորների ընտրության, առաջխաղացման գործընթացները և դարձնել առավել թափանցիկ**:

2.9 Սահմանել դատավորների համար գործուն երաշխիք, որը հնարավորություն կտա **դատավորներին վիճարկել իրենց կողմից կատարված սխալների մասով այլ մարմինների գնահատականները**, օրինակ՝ ՍԴ-ի միջոցով վիճարկել ԲԴԽ կայացրած որոշումները:

2.10 Ապահովել վերաքննիչ, վճռաբեկ և սահմանադրական դատարանների կողմից կայացված **որոշումների վերաբերյալ (դատական պրակտիկա) ամփոփ և բավարար մատչելի շտեմարանների ձևավորումը**՝ հիմք ընդունելով թեմատիկ դասակարգման սկզբունքը: Այսպիսի շտեմարանների կամ դատական պրակտիկայի վերաբերյալ էլեկտրոնային համալիր բազայի առկայությունը հնարավորություն կընձեռի ներդնել դատական պրակտիկայի անալիզի գործիք, որը գործում է, օրինակ՝ հետխորհրդային երկրներից Էստոնիայի Հանրապետությունում[8]: Այն իրականացվում է Բարձրագույն դատարանի կողմից: Այս գործիքի միջոցով բացահայտվում է նաև գործն ըստ էության քննող և լուծող, ինչպես նաև գործն ըստ էության չլուծող գործերով դատարաններում

[8] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://www.ejtn.eu/Documents/News%20articles/Court_Practice_Analysis.pdf

դատավորների կողմից թույլ տրված կոնկրետ դեպքերով մասնագիտական սխալները: **Դեռ ավելին, սա հնարավորություն է տալիս պարզելու, թե ինչպիսի ուղղություններով և թեմաներով է պետք վերապատրաստումներ իրականացնել տարբեր ատյանների դատավորների հետ**: Քանի որ Էստոնիայում ՍԴ դատավորներին ներկայացվող մասնագիտական, կրթական, աշխատանքային արհեստավարժության չափանիշները ամենաբարձրն են, վերջիններս էլ պետք է նպաստեն դատավորների վերապատրաստումների արդյունավետ իրականացմանը:

2.11 Նախատեսել **գործողություններ**, որոնք կձևավորեն և կամրապնդեն **դատական համակարգի և հանրության միջև թափանցիկ ու տեսանելի կապ**, ներառյալ ԶԼՄ-ների ներգրավվմամբ՝ որպես հասարակության և դատարանների միջև լուսաբանող և կապող օղակ: Օրինակ՝ նման նախադեպ է եղել ՀՀ վարչական դատարանում, կազմակերպվել է բաց դռների օր, երբ քաղաքացիները հնարավորություն ունեին ծանոթանալ դատարանի ընթացիկ աշխատանքին և նրա կողմից կայացված որոշումներին:

2.12 Սահմանել հնարավորություն, որ **բացի ՔՀԿ-ներից** դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հանձնաժողովում ընդգրկվեն **հանրային անձինք** ևս:

3. Իրավապահ համակարգի արդյունավետության բարձրացում

3.1 Նախատեսել Դատախազության կոլեգիայի որոշումները հասարակության համար թափանցիկ դարձնելուն ուղղված գործողություններ: Սա հնարավորություն կընձեռի ապահովել միասնական պրակտիկա օրենսդրական բացի և/կամ իրավական անորոշության պարագայում, երբ դեռ առկա չէ Վճռաբեկ դատարանի որոշում:

3.2 Քննչական մարմիններում կառուցվածքային փոփոխություններ **իրականացնելիս հիմք ընդունել այն հանգամանքը, որ 2016 թվականին քննվել է մոտավորապես թվով 20 000 քրեական գործ, մինչդեռ 2019 թվականի միայն առաջին կիսամյակում 18 500 քրեական գործ**: Ըստ այդմ, կառուցվածքային տեսանկյունից տարբեր քննչական խմբերի միացումը և/կամ անջատումն իրականացնել՝ հաշվի առնելով քննված քրեական գործերի վերաբերյալ վիճակագրական տվյալները և հանցագործությունների աճի ավելացման միտումները:

3.3 Նախագծով ցուցաբերել համակարգային մոտեցում նախաքննական, քննչական, դատախազական և դատական մարմինների սոցիալական ապահովության (բավարարվածության) վերաբերյալ դրույթները սահմանելիս, մասնավորապես՝

աշխատավարձի բարձրացումը նախատեսված է միայն դատախազների և դատավորների համար, մինչդեռ նախաքննական և քննչական մարմինների վրա դա չի տարածվում: **Անհրաժեշտ է Նախագծով կիրառել միատեսակ մոտեցում, ինչպես դա արվել է, օրինակ՝ բարեվարքության պահանջների մասով:**

3.4 Լրացնել Նախագծի **«զարգացնել քննիչների կարողությունները՝ կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում»** դրույթը՝ սահմանելով՝ ինչպես **Քննչական կոմիտեի ներքին ռեսուրսների,** այնպես էլ՝ կրթական-ակադեմիական հաստատությունների **միջոցով վերապատրաստումների իրականացումը:**

3.5 ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելիս այլընտրանքային պատիժների համակարգի ներդրման մասով **այլընտրանքային խափանման միջոց դիտարկել տնային կալանքը, որը կարող է էապես ազդել կալանավորման բարձր ցուցանիշների նվազման վրա:**

3.6 Քրեադատավարական օրենսդրությունում **նախատեսել դրույթներ՝ ուղղված տուժողի և վկայի՝ արդար դատաքննության իրավունքի խախտման բացառմանը**, մասնավորապես՝ **քննիչների ծանրաբեռնվածությունը պատճառ է հանդիսանում վերը նշված սուբյեկտների ներգրավմամբ գործերի քննության երկարաձգմանը:** Անհրաժեշտ է ցուցաբերել համակարգային մոտեցում, որը կբացառի յուրաքանչյուր քննիչի վարույթում գտնվող գործերի թվաքանակի պատճառով գործով վկայի և/կամ տուժողի իրավունքների խախտումը:

3.7 Խմբավորել բոլոր պետական փորձագիտական հիմնարկները և ձևավորել մեկ համալիր՝ արհեստավարժ, միասնական փորձագիտական կենտրոն, որտեղ փորձաքննությունների կատարումը կիրականացվի համակարգված, նույն մոտեցումներով և փորձագետների ողջամիտ ու համարժեք վարձատրությամբ: **Մեկ համալիր փորձագիտական կենտրոնին՝ որպես այլընտրանք, կարելի է դիտարկել լիցենզիաների հիման վրա ստեղծված մասնավոր մասնագիտական խմբերի առկայությունը:**

3.8 Նախագծով նախատեսել մոնիթորինգային այնպիսի գործիքներ, որոնց միջոցով փորձաքննությունների կատարման կոնկրետ ժամկետների պահպանման նկատմամբ հսկողություն կիրականացվի, և գրավոր եղանակով կարձանագրվեն այդ ժամկետներից խախտումների դեպքերը:

3.9 Քննարկել սահմանադրական բարեփոխումներ իրականացնելու հնարավորությունը՝ շեշտադրում կատարելով կայուն ինստիտուտների ամրագրման և զարգացման վրա։ Մասնավորապես՝ կայուն ինստիտուցիոնալ լուծումների միջոցով բացառել քննչական, դատախազական մարմինների և դատական համակարգի կախվածությունը տվյալ ժամանակահատվածում գործող քաղաքական ուժից, օրինակ՝ քննչական մարմինների ձևավորումը նախատեսել ԱԺ-ում քվոտաներով՝ մեծամասնություն ստացած քաղաքական ուժին տալով հիսուն տոկոս, իսկ մնացած հիսուն տոկոսը՝ մնացյալ ուժերին։

3.10 Քննչական և դատախազական մարմիններում աշխատանքային ծանրաբեռնվածությունը հաշվի առնելով՝ ներդնել դատավորի օգնականի ինստիտուտը նաև քննչական և դատախազական մարմիններում՝ Նախագծով ապահովելով միատեսակ մոտեցում։ Սա նաև նոր ավարտած իրավաբաններին հնարավորություն կտա տեսական կրթությունից անցում կատարել պրակտիկ աշխատանքի՝ լինելով քննիչի կամ դատախազի օգնական։

3.11 Քրեադատավարական օրենսդրությունում փոփոխություններ կատարելիս ամրագրել տուժողի նկատմամբ հարկադրանքի միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը բացառապես այն դեպքերում, երբ տուժողը գիտակցաբար և դիտավորյալ հրաժարվում է ներգրավվել իրավական գործընթացների մեջ և չկա վարույթն իրականացնող մարմնի կողմից այլընտրանքային եղանակով ապացույց ձեռքբերելու հնարավորություն։ Մասնավորապես՝ տուժողի կողմից քննչական գործողության (օրինակ՝ դատաբժշկական փորձաքննության) մասնակցելը։ Հարկադրանքի միջոցների կիրառումը, ընդհուպ պատասխանատվություն նախատեսելը տուժողի նկատմամբ կրում է օբյեկտիվ անհրաժեշտություն, քանի որ կան հանցագործություններ (բռնաբարություն, մարմնական վնասվածք հասցնելը և այլն), որոնց կատարման փաստը ապացուցվում է բացառապես տուժողի կողմից քննչական գործողությանը մասնակցելով։ Ինչպես նաև կյանքի և առողջության անձեռնմխելիության իրավունքը դիտարկելով բացառիկ՝ չպետք է տուժողի կողմից քննչական գործողությանը չմասնակցելը ոտնահարի անձի կյանքի և առողջության իրավունքը։[9] Անհրաժեշտ է այս համատեքստում բացառել նաև տուժողի և

[9] Համաժողովի ժամանակ ներկայացվեց նաև այն տեսակետը, որ տուժողին պատասխանատվության ենթարկելու հետ կապված անհրաժեշտ է առաջնորդվել կոնկրետ դեպքով և վարույթն իրականացնող մարմնին տալ որոշակի հայեցողություն։

հանցագործություն կատարած անձի միջև անօրինական պայմանավորվածությունները։

3.12 **Քննարկել տուժողների փոխհատուցման հիմնադրամի ներդրման հնարավորությունը**՝ ձևավորելով հիմնադրամի միջոցները տուգանքների արդյունքում առաջացած գումարներից։ Սա հնարավորություն կընձեռի տուժողներին որոշակի չափով ստանալ փոխհատուցում, երբ ամբաստանյալը չունի ոչ մի սեփականություն փոխհատուցելու պատճառված վնասը։ Փոխհատուցումները կարող են տրամադրվել համամասնորեն և որոշակի ժամանակահատվածում։

3.13 ՀՀ քրեական օրենսգրքում իրավաբանական անձի պատասխանատվության բացառումը սահմանելիս **անհրաժեշտ է ֆիզիկական անձանց պատասխանատվության բացառման հիմքերը ևս հաշվի առնել և տարածել դրանք իրավաբանական անձանց վրա**։

3.14 Նախատեսել գործողություններ, որոնք ուղղված կլինեն **դատական համակարգում կանանց ներգրավվածության ապահովմանը**, մասնավորապես՝ ՀՀ դատարանների կին ղեկավարների թվաքանակի աճին։

3.15 **Դատարանների և դատավորների մասնագիտացված բաժանման կտրվածքով առկա չէ սնանկության գործերով մասնագիտացված դատավորների ինստիտուտ**, սակայն առկա է մասնագիտացված սնանկության դատարան։ **Ուստի, անհրաժեշտ է ներդնել սնանկության գործերով մասնագիտացված դատավորների ինստիտուտ ևս։** Միաժամանակ պահպանել սիներգիաներ Փաստաբանական դպրոցի հետ, որտեղ առկա չէ մասնագիտացում սնանկության գործերով։ Այսինքն, սիներգիաներ պահպանվեն դատական գործերի տարբերակման, դատավորների, դատարանների և փաստաբանների միջև։

3.16 Նախագծով սահմանել գործողություն (միջոցառում)՝ **քննարկելու «դատական ակտերի մասնավոր հարկադիր կատարման ինստիտուտի»** ներդրման անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը։

4. Սահմանադրական և ընտրական բարեփոխումներ

4.1 Նախագծով Սահմանադրական բարեփոխումների շրջանակներում անհրաժեշտ է լուրջ տեղ հատկացնել **սահմանադրության նախագծի վերաբերյալ լայնածավալ իրազեկման աշխատանքներին։** Մասնավորապես, հարկավոր է հանրամատչելի և հասանելի եղանակներով անցկացնել հանդիպումներ թե՛ գյուղական, թե՛ քաղաքային համայնքների բնակիչների հետ՝ ներկայացնելու և պարզաբանելու՝ թե ինչ

փոփոխություններ են նախատեսված սահմանադրական բարեփոխումների փաթեթով և ինչ փոփոխություններ են բերելու այդ փոփոխությունները քաղաքացիների կյանքում:

4.2 Նախագծով անհրաժեշտ է նախատեսել դատական համակարգի կառուցվածքի վերաբերյալ համալիր հետազոտությունների իրականացումը: Ըստ այդմ, քննարկման առարկա պետք է դարձնել **ՀՀ-ում գործող եռաստիճան դատական համակարգ ունենալու անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը, ներառյալ՝ վճռաբեկ դատարանի փոխարեն Գերագույն դատարան ստեղծելու հնարավորությունը:** Քննարկել **սահմանադրական դատարանի փոխարեն ՀՀ դատական համակարգի շրջանակներում սահմանադրական արդարադատության իրականացման հնարավորությունը**, քննարկել դատավորների անկախությունն ապահովող մարմնի՝ **Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) լուծարման և դատավորների բարձրագույն ժողովին այդ իրավասության վերապահման հնարավորությունը**

4.3 Նախատեսել իրավակարգավորումներ, որոնք կգարգավորեն **ՀՀ-ում գործող կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված մարմնի կամ մարմինների համար անկախության սահմանադրական երաշխիքների ապահովման հարցը**:

4.4 Նախագծով առկա չէ ոչ մի իրավական հիմնավորում սահմանադրական բարեփոխումների իրականացման անհրաժեշտության վերաբերյալ: Եթե սահմանադրական բարեփոխումներն անհրաժեշտ են այն հիմքով, որ Սահմանադրությունն ընդունվել է նախկին քաղաքական իշխանության գործունեության ժամանակ, ապա անհրաժեշտ է Նախագծում ներկայացնել սահմանադրական բարեփոխումների իրականացման պատշաճ քաղաքաիրավական հիմնավորումներ, և ոչ թե՝ որպես հիմնավորում հղում կատարել երկու զեկույցի:[10]

4.5 Սահմանադրական բարեփոխումների շրջանակներում որպես ռազմավարական ուղղություն՝ **նախատեսել քաղաքական կենտրոնացվածության բացառման սկզբունքը**: Այդ կապակցությամբ լուծումներից մեկը կարող է լինելու «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նոր նախագիծը և դրանով բացառել մեկ **քաղաքական ուժի 75 տոկոս ներկայացվածություն:** Սա նաև կապահովի կուսակցական բազմակարծություն քաղաքական գործընթացներում:

4.6 Ընտրական բարեփոխումների շրջանակներում վերանայել «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածը և **նախատեսել պետական**

[10] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը, էջ 19, https://www.e-draft.am/projects/1900

ֆինանսավորում ոչ միայն ԱԺ-ում ներկայացվածություն ունեցող կուսակցությունների համար, այլ **բոլոր կուսակցությունների համար համամասնորեն և համաչափության սահմաններում:**

4.7 Ընտրական բարեփոխումների շրջանակներում ԱԺ ընտրություններին մասնակից կուսակցությունների կողմից **մուծված ընտրագրավի վերադարձի հնարավորություն նախատեսել նաև այն կուսակցություններին,** ովքեր չեն հաղթահարել քվեների առնվազն շեմը:

4.8 Ընտրական բարեփոխումների շրջանակներում փոփոխություն իրականացնել և թեկնածուների կողմից ներկայացված **գույքի և եկամուտների հայտարարագրերի վերլուծությունը վերապահել մասնագիտացված և գործիքակազմ ունեցող մարմնին,** այն է՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

4.9 Նախագծով նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի պատշաճ ապահովմանն ուղղված միջացառումներ: Մասնավորապես՝ հայտնի է, որ գործնականում ընտրությունների ժամանակ հաշմանդամություն ունեցող անձանց համար առկա են սահմանափակումներ, որոնք խոչընդոտում են իրացնել իրենց ընտրելու իրավունքը:

4.10 Ընտրական բարեփոխումներին առնչվող ռազմավարական ուղղություններում **անդրադարձ չի կատարվում կուսակցությունների պետական ֆինանսավորմանը, նախընտրական քարոզչության ժամանակ նրանց ֆինանսական գործարքների (միջոցների օգտագործում, ելքեր, մուտքեր և այլն) թափանցիկությանը:** Նախագծում ընտրական բարեփոխումների շրջանակներում՝ որպես ռազմավարական ուղղություն, **նախատեսել նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողության գործիքներ՝** նպաստելով կուսակցության ֆինանսական միջոցների թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը, ինչպես նաև դրանց օգտագործմանը՝ բացառապես կուսակցության կանոնադրությամբ նախատեսված նպատակների և խնդիրների իրականացման համար:

4.11 Վերանայել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմում գործող Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության գործունեության նպատակահարմարությունը, քանի որ այդ մարմինն օժտված չէ համապատասխան կարողություններով՝ ամբողջապես իրականացնելու նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, դրանց հաշվարկման և ծախսերի, ինչպես նաև կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն:

4.12 Վերանայել «Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածը: Մասնավորապես, կոռուպցիոն ռիսկերը բացառելու նպատակով նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով ԱԺ յուրաքանչյուր խմբակցության ներկայացրած աուդիտորի փոխարեն **Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունում ընդգրկել ՀՀ-ում աուդիտորի որակավորում ստացած անկախ մասնագետների:** Հակառակ պարագայում ստացվում է խմբակցությունն առաջարկում է անձի, ով ստուգում է հենց նույն կուսակցության փաստաթղթերի հիմնավորվածությունը, ինչն անաչառ և օբյեկտիվ կարգավորում չէ և խախտում է շահերի բախման քաղաքականությունը:

Համաժողովի համակազմակերպիչներ՝

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա

Հանրային խորհրդի պետահիրավական հարցերի հանձնաժողով

«08» հոկտեմբեր, 2019թ.